ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

(ծննդյան 100 ամյակի առթիվ)

ԲԱԲԿԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին սովորական մարդ չէր։ Նա իր ստեղծագործական կյանքով, գործունեությամբ և բնավորությամբ ըստ ամենայնի աչքի ընկնող անհատականություն էր, բազմակողմանի, բազմատաղանդ ականավոր գիտնական էր, մեծ քաղաքացի և գործիչ։

Ծավալուն էր Հովսեփ Օրբելու գիտական գործունեության ընդգրկումը, նա հայագետ էր, կովկասագետ, արևելագետ, գիտության խոշոր կազմակերպիչ և բոլոր դեպքերում էլ մեծ մասշտաբների։

Հովսեփ Օրբելին ծնվել է 1887 թ. մարտի 8-ին (20-ին), հայ մըտավորական ընտանիքում։ Պապը՝ նույնպես Հովսեփ Օրբելի, գիտնական հոգևորական էր, հայրը՝ Արգար Օրբելին, ավարտելով Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, իբրև դատավոր պաշտոնավարել է Հայաստանում՝ Նախիջևանում և Ծաղկաձորում։ Մայրը՝ Վառվառա Արզությանը, ծագում է Աբզության իշխանական տոհմից, եղել է մանկավարժ։ Ավագ եղբայրը՝ Ռուբեն Օրբելին (1880—1943), նույնպես ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը, աշխատել համալսարանի մագիստրոսի աստիճանի։ Հետագայում տարվելով ջրասույզի մասնագիտությամբ, գրել է աշխատություններ այդ մասնագիտության պատմության մասին։ Գործնականորեն զբաղվելով ծովում խորտակված նավերի ուսումնասիրության և բարձրացման հարցերով, նա դարձել է ստորջրյա հնագիտության հիմնադիրը Սովետական Միությունում։ Միջնակ եղբայրը՝ համաշխարհային անուն և հռչակ վայելող մեծ կազմախոս (ֆիզիոլոգ) Լևոն Օրբելին էր, ծնված հայրենի Ծաղկաձորում՝ 1882 թ.։

Հովսեփ Օրբելին՝ եղբայրներից կրտսերը, Թիֆլիսում ավարտելով գիմնազիան, 1904 թ. ընդունվում է Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, որն ավարտում է 1909 թ.։

Սակայն ուսանող Հովսեփ Օրբելուն, որն արդեն մասնակցում էր Անիի պեղումներին, ձգում էր արևելագիտությունը և դեռևս 1907 թ. նա ուսանում է նաև Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում, որն ավարտում է 1911 թ.։

Ուսումնառության տարիներին Հ. Օրբելին ստանում է հիմնավոր գիտելիքներ և պատրաստություն ինչպես պատմության և դասական բանասիրության, նույնպես և արևելյան լեզուների և արևելագիտության գծով։ Թե՛ մեկ և թե՛ մյուս ֆակուլտետում Հ. Օրբելին աշակերտել է մեծանուն շատ գիտնականների։ Նրա առջև լայնորեն բացվում են գիտության դռները, և դեռևս ուսանող՝ Օրբելին հրատարակում է ինը գիտական աշխատություն։

Հ. Օրբելին իբրև գիտնական ձևավորվում է Պետերբուրգի մեծահամբավ և փայլուն գիտնականների միջավայրում։ Վայելելով նրանցից շատերի, ամենից ավելի՝ Նիկողայոս Մառի, Ս. Ժեբելյովի, Վ. Բարտոլդի և այլոց ուշադրությունն ու հոգատարությունը, շուտով նա դառնում է իր ուսուցիչների տաղանդավոր գործընկերը։

Գիտական մկրտությունը Հովսեփ Օրբելին ստանում է Անիում։

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անին իր նշանավոր հուշարձանների ավերակներով վաղուց էր գրավել ճանապարհորդների և գիտնականների ուշադրությունը, բայց հնագիտական ուսումնասիրությունների առարկա դարձավ շատ ավելի ուշ՝ XIX դ. վերջերին։ Առաջինը մեծանուն հայագետ, կովկասագետ, արևելագետ և լեզվաբան Նիկողայոս Մառն էր, որը դեռևս 1892-1893 թթ. ձեռնարկեց Անիի հնագիտական պեղումները։ Արդյունավետ այդ պեղումներն ընդհատումներով շարունակվեցին մինչև 1917 թ., իսկ 1918 թ. թուրքական զորքերը զավթեցին Անին։ Նիկողայոս Մառը դեռևս 1906 թ. Անի հրավիրեց իր աշակերտ Հ. Օրբելուն, որը շուտով դարձավ պեղումների ղեկավարի աջ թևը և մերձավոր օգնականը։

Անիի սրշավախումբը հնագիտական պեղումներ և ուսումնասիրություններ կատարեց քաղաքի միջնաբերդում՝ Բագրատունի թագավորների հսկայածավալ պալատում, քաղաքի թաղամասերում, գլխավոր փողոցի վրա, բազմաթիվ շենքերի ավերակներում։ Բացվեցին հողաթմբերի տակ թաղված շատ շենքեր, եկեղեցիներ, որոնց թվում Գագիկ I-ի կառուցած ս. Գրիգոր ղվարթնոցյատիպ եկեղեցին, ուսումնասիրվեցին քաղաքի պարիսպները, ճարտարապետական հուշարձանները, ջրամատակարարման ուշագրավ համակարգը, քաղաքը եզերող հարյուրավոր քարայրներ։ Պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին հսկայական քանակությամբ տեղական արտադրանքի հնագիտական նյութեր, տարբեր երկրներից ներմուծված առարկաներ և մեծ քանակությամբ դրամներ։ Այդ ամենը բացառիկ նշանակություն ունեցավ միջնադարյան խոշոր քաղաքի նյութաարտադրական զարգացման, հարևան երկրների հետ ունեցած առևտրական-տնտեսական և մշակութային կապերի ուսումնասիրության, քաղաքային բնակչության սոցիալական կառուցվածքի, կյանքի և կենցաղի իրական պատկերի բացահայտման համար։ Անիի հնագիտական պեղումներին զուգահեռ քաղաքի ճարտարապետական հարուստ ու բազմազան հուշարձանների ուսումնասիրությունը կատարում էր մեծավաստակ ճարտարապետ Թորոս Թորամանյանը, որը հայ ճարտարապետության գիտական պատմության հիմնադիրը հանդիսացավ։

Միջին դարերի պատմության ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկի՝ քաղաքի պրոբլեմի, համար Անիի պեղումները խոշոր նշանակություն ունեցան։ Կարևոր նյութեր ստացվեցին ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Մերձավոր արևելքի քաղաքային կյանքի տարբեր կողմերի, նաև առևտրատնտեսական և մշակութային փոխադարձ կապերի ուսումնասիրության համար։

Անիի պեղումներն իրենց արդյունքներով և նշանակությամբ դուրս են գալիս զուտ հայկական շրջանակներից և ստանում են ընդհանուր մերձավորարևելյան հնչեղություն։

Ն. Մառը Անիում հիմնադրել էր հնագիտական թանգարան։ 1908 թ. Հ. Օրբելին նշանակվեց դրա վարիչ և ցուցաբերելով մեծ եռանդ ու շնորհք կարգավորեց թանգարանը և կազմակերպեց կուտակված նյութերի ցուցադրությունը։

Հ. Օրբելին գիտական բարձր մակարդակով դասակարգեց թանգարանում կուտակված նյութերը, նշելով նրանց հայտնաբերման վայրը, մշակութային

շերտը, միջավայրը, նույն տեղում գտնված նյութերի ամբողջականությունը և,ցուցաբերելով զարմանալի գիտելիքներ, տվեց դրանց բնութագրերն ու գիտական նկարագրությունը։

1909-1910 թթ., երբ Ն. Մառը զբաղված էր Գառնի ամրոցի պեղումներով, Անիի պեղումները ղեկավարում էր Հ. Օրբելին։ Նա արդեն ճանաչված գիտնական էր, և 1909 թ. արևելյան լեզուների ֆակուլտետի ղեկավարությունը Ն. Մառի հանձնարարությամբ նրան գործուղեց Խաչեն (Լեռնային Ղարաբաղ), որտեղ նա զբաղվեց հայկական ճարտարապետական հուշարձանների, կենցաղային քանդակների և վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությամբ։ Այդ գործուղման արդյունքներին էր նվիրված Հ. Օրբելու «Խաչենի խաչքարերի կենցաղային ռելյեֆները» հոդվածը, որը լույս տեսավ 1915 թ.՝ «Записки Восточного отдела» ակադեմիական ամսագրում։

Ն. Մառը պեղումների արդյունքները հրապարակում էր ամսագրերում՝ ամենամյա հաշվետվությունների ձևով, բայց նա անհրաժեշտ համարեց, որ այդ արդյունքները մշակվեն և հրատարակվեն ավելի հիմնավոր և մնայուն եղանակով, ուստի հիմնադրեց «Անվո շարք» մատենաշարը, որի 3-րդ համարը լույս տեսավ 1910 թ.՝ Անիի թանգարանի վարիչ Հ. Օրբելու հեղինակությամբ։

Անիի պեղումների համբավը մեծ էր. նույնքան մեծ էր նաև Անիի այցելուների թիվը, որոնց գիտական բացատրություններ էր տալիս Հ. Օրբելին։ Առաջացել էր ուղեցույց ունենալու անհրաժեշտությունը և «Անվո շարքի» 4-րդ համարով նույն 1910 թ. լույս տեսավ Հ. Օրբելու կազմած «Անի քաղաքի համառոտ ուղեցույցը» («Краткий путеводитель по городищу Ани») քաղաքի հատակագծով և կարևոր հուշարձանների նշումներով ու բնութագրությամբ։

1911 թ. լույս տեսավ Հ. Օրբելու «Развалины Ани» աշխատությունը և նրա հայերեն թարգմանությունը՝ «Անվո ավերակները» գրքույկը, որը Անի քաղաքի պատմությանը, հուշարձանների վիճակին և պեղումների արդյունքներին նվիրված առաջին ընդհանրացնող գիտական աշխատությունն էր։

Հ. Օրբելին արդեն անվանի և փորձված գիտնական էր և 1911 թ. գիտությունների ակադեմիան նրան գործուղում է Արևմտյան Հայաստան, որտեղ նա ուսումնասիրում է Վանի, Թոփրակ Կալեի, Հայկաբերդի, Աղթամարի, Արզրումի, Բայազետի, Բագավանի ուրարտական, հայկական և որոշ սելջուկյան հուշարձաններ։ Նրա հետաքրքրությունները չէին սահմանափակվում միայն նյութական մշակույթի հուշարձաններով։ Նա ուսումնասիրում է նաև հայերենի տեղական բարբառները, քրդերեն լեզուն, նրա Մոկսի բարբառը և հավաքում է զգալի քանակությամբ բանահյուսական նյութեր։

1912 թ. Օրբելին վերադառնում է Պետերբուրգ՝ հետը բերելով ուրարտական հնագիտական և հայկական ճարտարապետական նյութեր, վիմագիր արձանագրական, հայկական և քրդական բանահյուսական հարուստ հավաքածուներ։

Հ. Օրբելու հնագիտական աշխատանքները Անիում, Խաչենում և Արևմտյան Հայաստանում արժանանում են բարձր գնահատանքի, և 1912 թ. ընտրվում է ռուսական հնագիտական ընկերության անդամ։ 1913 թ. Ն. Մառի բացակայությամբ նա կրկին ղեկավարում է Անիի պեղումները։

1914 թ. Հ. Օրբելին նշանակվում է Պետերբուրգի համալսարանի պրիվատ դոցենտ և սկսում դասախոսություններ կարդալ հայկական վիմագրության մասին։ Հ. Օրբելու իմացությունները և մտահորիզոնը լայն էին, ուստի նրան հանձնարարվում է գրել հոդվածներ հայկական, վրացական և մուսուլմանական արվեստների մասին՝ Բրոկգաուզ Եֆրոնի նոր հանրագիտարանի համար։

1915 թ. Հ. Օրբելին Անիի պեղումներից հետո մեկնում է Ղրիմ՝ հայկական հուշարձանների ուսումնասիրության համար։

Մեծ հաջողություն էր սպասում նրան 1916 թ.։ Ռուսական հնագիտական ընկերությունը կազմակերպում է գիտական արշավախումբ դեպի Վան։ Ղեկավարը Ն. Յա. Մառն էր, օգնականը՝ Հ. Օրբելին, որն ինքնուրույն պեղումներ է կատարում Վանա ժայռի երկու խորշերում։ Դրանցից մեկում նա հայտ-

նաբերեց Արգիշտի II-ի մեծածավալ տարեգրությունը, որը բացառիկ նշանակություն ունեցավ Ուրարտուի պատմության և լեզվի ուսումնասիրության համար։

1912—1917 թթ. Հ. Օրբելին հրատարակում է 14 աշխատություն, որոնցից 8-ը նվիրված էին հայերեն վիմագիր արձանագրություններին, և գա պատահական չէր։ Ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, տապանաքարերի, անգամ կիրառական նշանակություն ունեցող իրերի, առարկաների վրա հանդիպում են հազարավոր արձանագրություններ։ Դրանք իրենց բնույթով և բովանդակությամբ լինում են շինարարական, նվիրատվական, ըստ որում նվիրաբերվում էին թանկարժեք իրերից սկսած մինչև այգիներ, հողեր, տներ, ջրաղացներ, անգամ գյուղեր՝ իրենց կախյալ բնակիչներով։ Կան նաև պատմաքաղաքական և ռազմական անցքերին, բնական արհավիրքներին, բնակչությունից գանձվող հարկ ու տուրքերին վերաբերող և այլ արձանագրություններ։ Վիմագիր արձանագրությունների պատմամշակութային բացառիկ արժեքը վաղուց էր նկատվել և XIX դ. մի շարք գիտնականներ և ճանապարհորդներ հավաքել և հրատարակել էին զգալի քանակությամբ արձանագրություններ։

1913 թ. լույս տեսավ Կ. Կոստանյանի կազմած «Վիմական տարեգիրք հայոց» ժողովածուն Ն. Մառի խմբագրությամբ և առաջարանով։ Ն. Մառը գնահատելով կատարված աշխատանքը և միաժամանակ նշելով թերությունները, առաջադրեց հայերեն արձանագրությունների հավաքման և գիտական ժողովածուների հրատարակման հարցը, որի իրականացումը հանձնարարվեց Հ. Օրբելուն։ Մշակվեցին ժողովածուների կազմման սկզբունքները։ Ժողովածուների հրատարակությունը դյուրացնելու նպատակով ստեղծվեցին նաև հատուկ տպագրական տառաձևեր՝ վիմագիր արձանագրություններում հանդիպող կցագրերով հանդերձ։ 1914 թ. հրատարակվեց «Հայկական վիմագիր հուշարձանների» («Памятники армянской эпиграфики») Հ. Օրբելու կազմած առաջին պրակը՝ նվիրված Մարմաշենի արձանագրություններին։ Սակայն արդեն շարված հաջորդ պրակների հրատարակությունը ձախողվեց 1924 թ. Լենինգրադում տեղի ունեցած ջրհեղեղի ժամանակ շարվածքի և մշակված հատուկ տառաձևերի մի մասի ոչնչացման հետևանքով։

Հ. Օրբելին հայերեն արձանագրությունների հրատարակությունը շարունակեց «Христианский Восток» ամսագրում, իր իսկ նախօրոք մշակած պատմամշակութային վերլուծական սկզբունքներով։

Հ. Օրբելին ամբողջությամբ հավաքել է Անիի Հաղարծնի վանքի վիմագիր արձանագրությունները, մեծ քանակությամբ արձանագրություններ Խաչենի և Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերից։

Հայերեն արձանագրությունների ժողովածուի կազմման և հրատարակության հարցին Հ. Օրբելին անդրադարձավ 1950-ական թվականների վերջերին։ Նրա հանձնարարությամբ այդ աշխատանքները ձեռնարկեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժինը՝ նրա վարիչ Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ։ Արդեն հավաքված է շուրջ 9000 արձանագրություն, որի կեսը հրատարակված է «Դիվան հայ վիմագրության» ժողովածուի վեց պրակներում, որոնցից առաջինում ամփոփված են Անիի արձանագրությունները, որոնք ժամանակին հավաքել ու հրատարակության էր պատրաստել Հ. Օրբելին։ Հրատարակության են պատրաստվում հետագա պրակները։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը շրջադարձային նշանակություն ունեցավ նաև Հ. Օրբելի գիտնականի և քաղաքացու կյանքում։ Նրա առջև կանգնեցին գիտական և գիտակազմակերպական նոր խնդիրներ, որոնք աստիճանաբար ավելի բազմակողմանի և խոշոր մասշտաբային բնույթ ստացան։ Իր ուսուցիչ Ն. Մառի հետ միասին նա աներկբա անցավ հաղթանակած հեղափոխության կողմը՝ պատրաստակամ ծառայելու նրա գիտական և մշակութային շինարարության բնագավառում։

1918 թ. նա ընտրվում է հնագիտական հանձնաժողովի խորհրդի անդամ,

մասնակցում է նրա վերակառուցմանը և Նյութական մշակույթի պատմության ռուսական (ապա պետական) ակադեմիայի հիմնադրմանը, որի ղեկավարը Ն. Մառն էր, իսկ ինքը վարում էր բաժնի վարիչի պաշտոնը։ 1919 թ. Հ. Օրբելին մասնակցում է Լազարյան ինստիտուտի վերակառուցմանը։ Նույն 1919 թ. նա նշանակվում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի թանգարանային գործերի կոլեգիայի գիտական քարտուղար, իսկ 1920 թ. ընտրվում է Նյութական մշակույթի պատմության ակադեմիայի հրատարակչության պետ. ու խմբագիր և այդ պաշտոնը վարում է մինչև 1924 թ.։ Միաժամանակ, 1920—1922 թթ. նա վարում է նույն ակադեմիայի, ինչպես և գիտությունների ակադեմիայի տպարանական կոմիտեի նախագահի պաշտոնը, դժվարին պայմաններում կարգավորում ակադեմիայի տպագրական գործը։ Նույն այդ տարիներին պրոֆեսորի պաշտոնով դասախոսություններ է կարդում Պետրոգրադի համալսարանում, ակադեմիայի հնագիտության ինստիտուտում, վերակազմված Լազարյան ինստիտուտում (Մոսկվայում), նաև ակադեմիայի հաբեթաբանության ինստիտուտում։ Ծանրաբեռնված մի շարք պաշտոններով ու պարտականություններով, Հ. Օրբելին ցուցաբերում է գիտական ու գիտակազմակերպական մեծ տաղանդ ու բացառիկ եռանդ։

1920 թ. նա ընտրվում է Պետական էրմիտաժի թանգարանային արժեքների պահպանի պաշտոնում և նրա ճակատագիրը երեսուն տարուց ավելի կապվում է էրմիտաժի հետ։ Էրմիտաժը աշխարհի խոշորագույն թանգարաններից մեկն էր, սակայն նրա ցուցադրություններում Արևելքը կարելի է ասել բացակայում էր։ Մինչդեռ ռուսական արևելագիտությունը, որը համաշխարհային հռչակ էր վայելում, արդեն առաջադրել էր այն հարցը, որ առանց Արևելքի ժողովուրդների մշակույթի համաշխարհային մշակույթի և արվեստի պատմությունը խիստ թերի կլինի։ Ն. Մառը և Հ. Օրբելին այդ ճշմարտությունը զգում էին խորապես, և Հ. Օրբելին խոշոր ջանքեր գործադրեց արևելյան մշակույթի գանձերը էրմիտաժում կենտրոնացնելու ուղղությամբ։ Նա կազմակերպեց արևելյան մշակույթի և արվեստի ցուցահանդեսներ, մի քանի աշխատություն նվիրեց Արևելքի մշակույթի արվեստի հուշարձաններին, բացահայտելով դրանց պատմամշակութային արժեքն ու նշանակությունը։ Նախապատրաստական աշխատանքը կատարվել էր մեծ թափով ու եռանդով։ 1926 թ. բացվում է Պետական էրմիտաժի արևելյան բաժինը և նրա ղեկավար, բնականաբար, ընտրվում է Հ. Օրբելին։

Եթե մինչև 1917 թ. Հ. Օրբելու գիտահետազոտական ուսումնասիրությունները կրում էին առավելապես հայագիտական բնույթ, ապա հեղափոխությունից հետո նա ներգրավվեց ընդհանուր արևելագիտության գիտակազմակերպական, ապա և գիտահետազոտական աշխատանքի ոլորտը։ Նրա աշխատությունները նույնիսկ եթե նվիրվում էին առանձին, թվում էր մասնավոր հարցերի, ըստ էության վերաբերում էին Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների մշակույթին, պատմության կարևոր հարցերին և աչքի էին ընկնում լայն ընդգրկումով ու ընդհանրացումների մեծ ուժով։

Հ. Օրբելու գիտական վաստակը բարձր գնահատվեց և 1924 թ. նա ընտրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։

Գիտական և գիտակազմակերպական աշխատանքներին զուգահեռ նա շարունակում էր դասախոսական աշխատանքը, 1928-1931 թթ. վարելով Լենինգրադի համալսարանի հայ-վրացական բանահյուսության Արևելքի նյութական մշակույթի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը։

Եվ այնուամենայնիվ հնագիտությունը Հ. Օրբելու նախընտրած բնագավառն էր և նա հնարավորություններ էր որոնում դաշտ դուրս գալու։ 1928 թ. նա գործուղվում է Դաղստան և Դերբենդի պարսպի մանրազնին ուսումնասիրությամբ հայտնաբերում է պահլավերեն արձանագրություններ, հաշվի է առնում և ուսումնասիրում հարյուրից ավելի բարձրաքանդակներ։ 1929 թ. նա գլխավորում է էրմիտաժի և Նյութական մշակույթի պատմության պետական

ակադեմիայի արշավախումբը Դաղստանում, շարունակելով տեղի հնությունների ուսումնասիրությունը։

Դաղստանից Հ. Օրբելին ուղևորվում է Հայաստան՝ հայկական հնագիտական և ճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով։ 1930 թ. Հ. Օրբելին մեկնում է Ուրալ, այս վայրերի նորահայտ և թանգարաններում գտնվող սասանյան արվեստի հուշարձանները ուսումնասիրելու համար։ 1931 թ. հունվարին Լոնդոնում գումարվելու էր իրանական արվեստի և հնագիտության 2-րդ միջազգային կոնգրեսը, որի կազմկոմիտեի անդամ էր նաև Օրբելին և Սովետական Միությունը մասնակցելու էր կոնգրեսի առթիվ բացվելիք ցուցահանդեսին։ Հ. Օրբելին գլխավորեց ցուցահանդես ուղարկվելիք նյութերի ընտրությունը ոչ միայն էրմիտաժից, այլև արևելյան մշակույթների, պատմության և ասիական թանգարաններից և 1930 թ. վերջերին մեկնեց Լոնդոն։

Կոնգրեսում, որի աշխատանքներին մասնակցում էին խոշորագույն մասնագետներ տարբեր երկրներից, կարդացվեցին զգալի թվով զեկուցումներ։ Հ. Օրբելին, որն իր ուսուցիչ Ն. Մառի հետ միասին հնագիտական և արվեստի իրերը դիտում էր պատմամշակութային տեսանկյունից և բազմակողմանի համադրական (կոմպլեքս) մեթոդով, ջանալով բացահայտել դրանց բուն էությունն ու նշանակությունը, չէր կարող չնկատել, որ Լոնդոնի կոնգրեսում զեկուցումները կրում էին գերազանցապես ձևական բնույթ, մյուս կողմից համարյա ամեն ինչ համարվում էր իրանական կամ դիտվում էր իրանական ազդեցության տեսանկյունից։ Ինչ վերաբերում էր ցուցահանդեսին, ապա Սովետական Միությունից ներկայացված ցուցանմուշներն այնպիսի զորեղ տպավորություն գործեցին, որ կոնգրեսի մասնակիցները հարց հարուցեցին, որպեսզի իրանական արվեստի և հնագիտության 3-րդ կոնգրեսը, ուղեկցող ցուցահանդեսով հանդերձ, տեղի ունենա Սովետական Միությունում։

Դեռևս 2-րդ կոնգրեսում որոշում էր ընդունվել միասնական ջանքերով ստեղծելու «Պարսկական արվեստի ուրվագծեր» աշխատությունը, որի խմբագրական կազմում ընդգրկվեց նաև Հ. Օրբելին։

Անիում կատարվող պեղումների և ուսումնասիրությունների տարիներին Ն. Մառը և Հ. Օրբելին նկատել էին հարևան ժողովուրդների մշակույթների միջև զոյություն ունեցող ընդհանրությունները և դրանց սոցիալական ու դասային (այդպես նրանք անվանում էին դասակարգերը) բնույթը և գտնում էին, որ սահմանաբաժան գիծն անցնում է իշխողների և ճնշվածների ոչ միայն կենցաղի, այլև գաղափարախոսության և մշակույթի միջով։ Այս մոտեցումը կիրառվեց նաև էրմիտաժի արևելյան բաժնի 1931 թ. ցուցադրության մեջ, որի առթիվ Հ. Օրբելին հրատարակեց «Պատմական գիտության մի քանի ավանդույթների դասակարգային արմատների մասին» հոդվածը, որի վերնագիրն իսկ խոսում է։ Այդ կապակցությամբ նա միանգամայն մերժելի համարեց Արևելքի երկրների և նրանց մշակույթի սահմանազատումը «մուսուլմանական արևելքի» և «քրիստոնեական արևելքի», որով անտեսվում էին Մերձավոր արևելքի երկրների պատմամշակութային ավանդույթների մեջ նկատվող ընդհանրությունները և, ընդհակառակը, դրանք հակադրվում էին մեկը մյուսին։ Հ. Օրբելին նշում էր, որ այդ ոչ գիտական անվանումները դեռևս չեն վերացել ակադեմիական գիտության շրջանառությունից։

Միջազգային ճանաչում գտած և մեծ հեղինակություն վայելող գիտնականը 1934 թ. նշանակվեց Պետական էրմիտաժի դիրեկտոր և փառքով վարեց այդ պաշտոնը մինչև 1951 թ.։

1934 թ. նշվում էր Իրանի հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու ծննդյան 1000 ամյակը։ Հ. Օրբելին, լինելով կառավարական հոբելյանական հանձնաժողովի անդամ, մեծ շուքով կազմակերպեց գիտությունների ակադեմիայի ու էրմիտաժի հոբելյանական նստաշրջանները և ցուցահանդեսը, զեկուցումներով հանդես եկավ Լենինգրադի և Մոսկվայի հանդիսավոր նիստերում, Ֆիրդուսու և նրա «Շահնամեի» վերաբերյալ գրեց հոդվածներ։ Նույն տարվա հոկտեմբերին Հ. Օրբելին սովետական պատգամավորության կազմում մեկնեց

Թեհրան՝ մասնակցելու Ֆիրդուսու 1000 ամյակին նվիրված կոնգրեսին, որտեղ հանգես եկավ զեկուցմամբ։ Նա իր հետ տարել էր Էրմիտաժի սասանյան 15 թասերի և ափսեների ճշգրիտ պատճենները և այդ նվերի հանձնումը աննկարագրելի տպավորություն գործեց։

1935 թ. հանդիսացավ Հ. Օրբելու կյանքի՝ և գիտական ու կազմակերպական գործունեության առավել նշանակալից տարիներից մեկը՝ նա ընտրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Թեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր և պարգևատրվեց Իրանի լուսավորության մինիստրության «Գիտական վաստակի համար» 1-ին աստիճանի շքանշանով. բացի այդ լույս տեսավ նրա մեծարժեք աշխատությունը՝ «Սասանյան մետաղը, գեղարվեստական առարկաներ ոսկուց, արծաթից, բրոնզից», Կ. Տրևերի հեղինակակցությամբ։ Երախտագետ աշակերտը հոդված նվիրեց իր ուսուցչի՝ Ն. Մառի հիշատակին, որը վախճանվել էր 1934 թ. դեկտեմբերին։ Վերջապես, 1935 թ. իրանական արվեստի և հնագիտության 3-րդ կոնգրեսի տարին էր, որը գումարվեց Լենինգրադում։ Կոնգրեսի նախագահը լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Բուբնովն էր, իսկ տեղակալը՝ Հ. Օրբելին, որը և ղեկավարեց կոնգրեսը, ցուցաբերելով արտակարգ եռանդ ու հմտություն։ Կոնգրեսին ներկայացել էին իրանագիտության խոշորագույն դեմքերը 18 երկրներից։ Կոնգրեսին նվիրված ցուցահանդեսը կազմակերպված էր Էրմիտաժի 84 սրահներում։ Ամեն ինչ մասշտաբային էր, հանդիսավոր, միաժամանակ գիտական բարձր մակարդակի պահպանմամբ։ Կոնգրեսի եզրափակիչ երկու նիստերը տեղի ունեցան Մոսկվայում։

Կոնգրեսում կարդացվեցին մեծ քանակությամբ զեկուցումներ, որոնք, ինչպես և կոնգրեսին նվիրված ցուցահանդեսը, աչքի էին ընկնում բազմազանությամբ, կարևոր հարցադրումներով և ընդհանրացումներով։ Ի տարբերություն Լոնդոնի 2-րդ կոնգրեսի, թեմատիկ և ժամանակագրական սահմանափակումներ չդրվեցին, և իրանական արվեստն ու մշակույթը քննարկվում, գիտվում էին Մերձավոր արևելքի ժողովուրդների պատմամշակութային զարգացման հետնախորքի վրա՝ նրանց կապերի և աղերսների բացահայտմամբ։ Ամեն ինչ իրանական համարելու կամ իրանական ազդեցությամբ բացատրելու պանիրանական տեսակետը մերժված էր։

Հ. Օրբելու զեկուցումը նվիրված էր սելջուկյան արվեստի պրոբլեմին։ Սուր կերպով քննադատելով սելջուկյան արվեստի մասին եղած թյուր տեսակետը, նա ընդգծում էր, որ սելջուկյան կոչվող կուլտուրայի ստեղծմանը «մասնակցել են Փոքր Ասիայի, Անդրկովկասի, Իրանի, նկատելիորեն նաև Միջին Ասիայի բազմաթիվ ժողովուրդներ»։ «Սելջուկյան արվեստ» արտահայտությունը Հ. Օրբելին համարում էր ավելի դինաստիական, էթնոդավանաբանական հասկացություն, որը չի համապատասխանում այդ արվեստի բուն էությանը։ Իր զեկուցման մեջ Հ. Օրբելին կրկին անդրադարձավ ժողովուրդների և նրանց մշակույթների «մուսուլմանական արևելք», «քրիստոնեական արևելք» դավանաբանական սկզբունքով սահմանազատմանը և սուր քննադատության ենթարկեց այդ մոտեցումը, որից արևմտյան արևելագիտությունը չէր հրաժարվել։

Կոնգրեսից հետո իրականանում է «Պարսկական արվեստի ուրվագծեր» միջազգային բազմահատոր աշխատության անգլերեն լեզվով կատարվող հրատարակությունը, որին Հ. Օրբելին մասնակցեց ոչ միայն իբրև խմբագիրներից մեկը, այլև գրեց մի ծավալուն և ընդհանրացնող ուսումնասիրություն՝ «Սասանյան և վաղ իսլամական մետաղագործությունը» խորագիրը կրող աշխատությունը։ Դրա բնագիրը զետեղվեց նշված հրատարակության 1-ին, իսկ պատկերները 4-րդ հատորներում, որոնք լույս տեսան 1938 թ.։

Միջին դարերի պատմության կարևոր իրողություններից է ֆեոդալական ամրոցը, որի ուսումնասիրությունը նույնպես հնագիտության խնդիրներից մեկն էր։ 1936 թ. Հ. Օրբելին ձեռնարկեց Անբերդ ամրոցի պեղումները։ Էրմիտաժի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի աշխատակիցներից բաղկացած արշավախումբը Հ. Օրբելու գլխավորությամբ սկսեց Արագածի բարձրադիր լանջին տեղադրված այդ ամրոցի հնագիտական

ուսումնասիրությունը։ Անրիդը պատկանում էր Պահլավունի իշխաններին, որոնք սերտորեն կապված էին Անիի հետ և լինելով Բագրատունյաց թագավորության այուներից մեկը, խոշոր ռազմաքաղաքական դեր էին կատարում երկրի կյանքում։ Ուսումնասիրության առարկա հանդիսացան XI դարում կառուցված ամրոցի պաշտպանական համակարգը, իշխանական դղյակը, եկեղեցին, բաղնիքը, ջրամատակարարումը, ամրոց-քաղաք փոխադարձ կապը և այլ հարցեր։ Պեղումներն արդյունավետ էին, բայց նույն տարում էլ ընդհատվեցին։ Էրմիտաժի հոգսերով ծանրաբեռնված՝ Հ. Օրբելին ընտրվել էր նաև գիտությունների ակադեմիայի, հնագիտության ինստիտուտի դիրեկտոր*։

1936 թ. Հ. Օրբելին Կ. Տրևերի հեղինակցությամբ հրատարակեց աշխատություն շախմատի մասին։ Շախմատը հնդիկների հայտնագործությունն էր, բայց լայնորեն տարածվեց Հեռավոր արևելքում, Իրանում, Կովկասում, ապա նաև եվրոպական երկրներում։

1937 թ. նշվում էր Ա. Պուշկինի մահվան 100 ամյակը և Հ. Օրբելին գիտությունների ակադեմիայի հոբելյանական նիստում հանդես եկավ «Պուշկինը և վրաց գրականությունը» տպավորիչ զեկուցմամբ, երևան բերելով ռուսական մշակույթի լայն իմացություններ։ Բացի այդ, Էրմիտաժում կազմակերպվեց Ա. Պուշկինին նվիրված ցուցահանդես։ Հետագայում Էրմիտաժում բացվեց ռուսական մշակույթի բաժին։

1937-1938 թթ. Հ. Օրբելին հսկայական աշխատանք կատարեց վրաց հանճարեղ պոետ Շոթա Ռուսթավելու 750-ամյա հոբելյանի կազմակերպման գծով։ Հոբելյանի նախապատրաստությունը կատարվում էր ընդարձակ ծրագրով։ Կազմակերպվեց Շոթա Ռուսթավելու դարաշրջանին նվիրված հսկայական ցուցահանդես, ըստ որում Լենինգրադ բերվեցին ցուցանմուշներ նաև Անդրկովկասի հանրապետություններից։ Սրագրված էր հրատարակության նախապատրաստել Ռուսթավելու դարաշրջանին նվիրված գիտական ժողովածու։ Զարմանալի մարդ էր Հովսեփ Օրբելին, նրա բռնած գործը պետք է խոշոր, մասշտաբային լիներ, ինքը ներշնչված ապրում էր մեծ ոգևորություն և ցուցաբերում էր արտակարգ եռանդ, կարողանում էր ոգևորությամբ ու եռանդով համակել ամենքին, մի ամբողջ կոլեկտիվի։ Պետք էր տեսնել այդ օրերին, թե ի՜նչ եռուզեռ էր ապրում Էրմիտաժի հսկայական կոլեկտիվը։

Նա փայլուն հռետոր էր, իմաստալից, թևավոր խոսքի վարպետ։ Հ. Օրբելին խորապես ուսումնասիրել էր Ռուսթավելու անմահ պոեմը և անգիր գիտեր ամբողջ հատվածներ, աֆորիզմներ ինչպես վրացերեն բնագրից, նույնպես և ռուսերեն թարգմանությունից։ Լենինգրադի և Մոսկվայի հոբելյանական նիստերում 1938 թ. նրա զեկուցումները մեծ տպավորություն են գործել։ Հոբելյանին նվիրված ժողովածուն լույս տեսավ նույն թվականին՝ Հ. Օրբելու առաջաբանով և յոթ հոդվածներով։ Նա խմբագրել էր Շոթա Ռուսթավելու պոեմի ռուսերեն թարգմանությունը և գրել նրա առաջաբանը, խմբագրել էր նաև Վիսրամիանի XII դ. վրացական վեպը, որը XI դ. պարսկական Վիս և Ռամին պոեմի զուգահեռն էր։ Հ. Օրբելին նշանավոր վրացագետ էր։

1938 թ. Հ. Օրբելին ընտրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) նախագահության նախագահ։ Նա մեծապես նպաստում է ոչ միայն հասարակական, հայագիտական, այլև բնական գիտությունների զարգացմանը Հայաստանում։ Արմֆանը Հ. Օրբելու զեկավարությամբ դառնում է գիտահետազոտական աշխատանքների խոշոր կենտրոն։

1939 թ. տեղի ունեցավ «Սասունցի Դավիթ» անմահ էպոսի 1000 ամյակի հոբելյանը։ Ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի գլխավորությամբ կազմվել էր էպոսի համահավաք բնագիրը։ Հ. Օրբելին կազմակերպեց նրա թարգմանությունը ռուսերեն, որը խմբագրեց և գրեց ընդարձակ առաջաբան, քննար-

* Հետագայում Անբերդի ուսումնասիրությունները շարունակեցին Հ. Օրբելու աշակերտ և գործընկեր ճարտարապետ Ն. Տոկարսկին և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենը։

կելով էպոսի ծագման, ձևավորման գաղափարական-գեղարվեստական արժանիքները, ժողովրդական էությունը։ Դրանով էպոսի գիտական ուսումնասիրությունը բարձրացվեց մի նոր, ավելի բարձր մակարդակի։ Հ. Օրբելին գլխավորում էր էպոսին նվիրված ցուցահանդեսի կազմակերպումը Հայաստանի պետական պատմական թանգարանում։ Հ. Օրբելին իր տարերքի մեջ էր։ Նա հանգես էր գալիս «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված հոդվածներով՝ լրագրերում և ամսագրերում, զեկուցումներով՝ գիտական և աշխատավորական կոլեկտիվներում։ Նրա ղեկավար մասնակցությունը հոբելյանի կազմակերպմանը և անցկացմանը, նրա փայլուն զեկուցումը հանդիսավոր նիստում տոնական շուք ու թափ հաղորդեցին հոբելյանին։

Հ. Օրբելու հեղինակությունը չափազանց մեծ էր գիտության և արվեստի բնագավառներում։ 1941 թ. նա ընտրվեց ՍՍՀՄ Ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ։ Նա ժողովուրդների բարեկամության նախանձախնդիր մեծ ինտերնացիոնալիստ էր։ Դեռևս 1911—1912 թթ. նա ուսումնասիրելով Մոսկվի քրդական բարբառը, հավաքել էր մեծ քանակությամբ քրդական բանահյուսական նյութեր, որոնք հրատարակության էր պատրաստում, կազմել էր քրդերեն-ռուսերեն բառարան, Լենինգրադի համալսարանում դասավանդել քրդական բանահյուսություն, պատրաստել էր քրդագիտական կադրեր։ Հ. Օրբելին հանդիսացավ քրդագիտության հիմնադիրը ՍՍՀՄ-ում։ 1940-1941 թթ. նա ձեռնարկեց ադրբեջանական մեծ բանաստեղծ Նիզամու 800 ամյակին և ուզբեկական գրականության հիմնադիր Ալիշեր Նավոյիի 500 ամյակին նվիրված հոբելյանների նախապատրաստումը Լենինգրադում։ Հոբելյանները տեղի ունեցան 1941 թ. հոկտեմբերին և դեկտեմբերին ֆաշիստական արկերի և ռումբերի պայթյունների պայմաններում։

Սկսվել էր Հայրենական պատերազմը և առաջացել էր էրմիտաժի հարստությունները երկրի խորքը տեղափոխելու հրատապ հարցը։ Էվակուացման պլանն արդեն մշակված էր և էրմիտաժի աշխատակիցների ամբողջ կոլեկտիվը Հ. Օրբելու գլխավորությամբ գիշեր-ցերեկ զբաղված էր հազարավոր արժեքների փաթեթավորման, արկղերում դասավորելու գործով։ Էրմիտաժին տրված էին օժանդակ զորաջոկատներ և պատերազմի ութերորդ օրը առաջին գնացքը հինգ հարյուր հազար թանգարանային իրերով բեռնավորված շարժվում է դեպի արևելք։ Հուլիսի կեսերին արևելք է ուղղվում երկրորդ գնացքը։ Այդքան կարճ ժամանակամիջոցում էրմիտաժի հիմնական արժեքների էվակուացիան իսկական սխրագործություն էր։ Էվակուացվեցին նաև Լենինգրադի այլ թանգարանների էրմիտաժ տեղափոխված արժեքների մի մասը։ Հ. Օրբելին մեծ թվով գիտնականների հետ միասին մնաց Լենինգրադում կազմակերպելու տեղում մնացած թանգարանային արժեքների պահպանությունը։ Էրմիտաժի նկուղները վերածվել էին ռմբապաստարանների, որտեղ ռմբակոծության ժամանակ պատսպարվում էր շուրջ երկու հազար մարդ։ Այս անասելի ծանր պայմաններում թանգարանային արժեքների կենտրոնացման և պահպանման հետ միասին կատարվում էին նաև գիտահետազոտական աշխատանքներ։ 1941—1942 թթ. ձմռանը Լենինգրադում տիրող ծանրագույն պայմաններում Հ. Օրբելու երևալը սրահներում, նկուղներում սփոփիչ էր և դիմանալու ուժ էր ներշնչում։

1942 թ. ապրիլին Հ. Օրբելին մի խումբ գիտնականների հետ միասին էվակուացվեց Երևան։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը, նրա ղեկավարությամբ ամրապնդվել էր, Հայաստանում կային հին սերնդի ականավոր գիտնականներ, առաջացել էին գիտական նոր ուժեր, և Հ. Օրբելին Հայաստանում գիտությունների ակադեմիա ստեղծելու նախաձեռնողներից մեկը եղավ։ 1943 թ. նոյեմբերի 10-ին Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում ընդունեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի հիման վրա Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա ստեղծելու մասին և նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի օրը, տեղի ունեցավ ակադեմիայի հիմնադիր ժողովը։ Հ. Օրբելին ընտրվեց նորաստեղծ ակադեմիայի պրեզի-

գենտ։ Նա մշակեց ակադեմիայի կանոնադրությունը, որով նախատեսվում էին ինչպես հասարակական, նույնպես և բնական գիտությունների հետագա զարգացման խնդիրներն ու հեռանկարները։

1944 թ. Հ. Օրբելին վերադառնում է Լենինգրադ։ Պատերազմի տարիներին Ձմեռային պալատը ռմբակոծությունների հետևանքով մեծ վնաս էր կրել։ Հ. Օրբելին եռանդագին հետևում է պալատի վերականգնման աշխատանքներին։ Արևելքից արդեն վերադառնում էին Էրմիտաժի գանձերը, և Հ. Օրբելին գլխավորեց նրանց ընդունման, հսկայածավալ թանգարանի ցուցադրության կազմակերպման աշխատանքները, որոնք ավարտվեցին կարճ ժամանակամիջոցում։ Էրմիտաժը վերակենդանացել էր և 1945 թ. նոյեմբերին կրկին բացեց իր դռները հաղարավոր այցելուների առջև. 1944 թ. Հ. Օրբելին պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Հ. Օրբելու միջազգային հեղինակությունն իր բարձրակետին էր հասել, և նա 1944 թ. ընտրվում է Լոնդոնի հնագիտական ընկերության անդամ, իսկ 1945 թ.՝ իրանական ակադեմիայի պատվավոր անդամ։

1944-1945 թթ. Հ. Օրբելին հաստատված էր Լենինգրադի մերձակայքի պալատներին և հուշարձաններին պատճառված վնասների հաշվառման Պետական արտակարգ հանձնաժողովի անդամ և բանիմաց ու եռանդուն մասնակցություն ցուցաբերեց նրա աշխատանքներին։

Հայտնի է, թե ինչպիսի զայրույթով ելույթ ունեցավ նա պատերազմի հանցագործների Նյուրնբերգյան դատավարության ժամանակ՝ հրավիրված լինելով իբրև վկա։

1945 թ. Հ. Օրբելին պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով։

Հ. Օրբելին նույն եռանդով շարունակում էր աշխատանքը Էրմիտաժում, բայց 1951 թ. անսպասելիորեն ազատվեց Էրմիտաժի դիրեկտորի պարտականություններից։ Էրմիտաժում նա պաշտոնավարել էր սկսած 1920 թ., չափազանց մեծ, հսկայական էր եղել նրա վաստակը, նա սիրում էր Էրմիտաժը, և ահա նրա դռները փակվում են իր առջև։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը Հ. Օրբելուն հրավիրեց Հայաստան։ Այստեղ Հ. Օրբելու իսկ առաջարկով արդեն հատարվում էին Գառնիի պեղումները և նա մեկ ու կես ամիս մասնակցեց Գառնիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին՝ լինելով նրա պատվավոր խորհրդատու։

1953-1956 թթ. Հ. Օրբելին աշխատում էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտում։ 1955 թ. նա նշանակվում է Լենինգրադի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, իսկ 1956 թ.՝ նաև նույն համալսարանի Մերձավոր և Միջին արևելքի երկրների պատմության ամբիոնի վարիչ։ Համալսարանում նա խոշոր աշխատանք կատարեց երիտասարդ արևելագետների պատրաստման գործում։

1956 թ. ծննդյան 70 ամյակի կապակցությամբ նա պարգևատրվում է Լենինի երկրորդ շքանշանով։ Նույն 1956 թ. Հ. Օրբելին հաստատվեց ՍՍՀՄ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչ և իր շուրջը համախմբելով Լենինգրադի արևելագետներին, մանավանդ երիտասարդ մասնագետների, հաջող ջանքեր գործադրեց Լենինգրադի, իբրև արևելագիտության խոշոր կենտրոնի, համբավը վերականգնելու ուղղությամբ։

Մեծ է եղել նրա վաստակը գիտական կադրերի պատրաստման բնագավառում։

1930-ական թվականների կեսերին Հ. Օրբելին վերամշակեց և լրացրեց «Հայկական հերոսական էպոսը» («Սասունցի Դավիթ») և «Միջնադարյան Հայաստանի առակները» աշխատությունները, որոնք լույս տեսան 1956 թ. իր իսկ ռուսերեն թարգմանությամբ։ Նա ռուսերեն թարգմանել է նաև միջնադարյան հայ պատմիչների՝ Եղիշեի, Թովմա Արծրունու, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի և Շապուհ Բագրատունու աշխատությունները, որոնց ձեռագրերը պահվում են նրա արխիվում։

1960 թ. Հ. Օրբելին Մոսկվայում գումարված արևելագետների 25-րդ միջազգային կոնգրեսի նախագահի տեղակալն էր և ակտիվ մասնակցություն ցուցաբերեց նրա աշխատանքներին, բայց դա եղավ նրա բուռն, բազմակողմանիորեն հարուստ գիտական և գիտակազմակերպական գործունեության վերջին ակտը։ Նա վախճանվեց 1961 թ. փետրվարի 2-ին։

Առաջացել էր Հ. Օրբելու աշխատությունների ժողովածուի հրատարակության հարցը։ Նրա մշտական գործընկեր Կ. Տրևերը դեռևս 1950-ական թվականների վերջերին հավաքել և ժամանակագրական կարգով դասավորել էր Հ. Օրբելու տարբեր տարիներին և զանազան ամսագրերում հրատարակված աշխատությունների ժողովածուն։ Երևանում այն խմբագրվեց, վերադասավորվեց ըստ աշխատությունների բնույթի և բնագավառների և Հ. Օրբելու հավանությանն արժանանալով հանձնվեց տպագրության, բայց լույս տեսավ 1963 թ.՝ հետմահու։

Նախատեսված էր Հ. Օրբելու աշխատությունները հրատարակել չորս հատորով։ 1968 թ. Մոսկվայի «Наука» հրատարակությունը լույս ընծայեց ժողովածուի 1-ին հատորը և դրանով գործը կանգ առավ։ Մինչդեռ Հ. Օրբելու արխիվում մնում են մի շարք աշխատություններ, որոնք սպասում են իրենց հրատարակությանը։

Հովսեփ Օրբելին սովորական մարդ չէր։ Նա բուռն, հախուռն բնավորությամբ անձնավորություն էր, մեծատաղանդ գիտնական, որին բնորոշ էր գիտաստեղծագործական խոր ներշնչվածությունը, լայն աշխարհայացքը, նուրբ դիտողականությունը, վիճաբանական կիրքը, ուսումնասիրության համադրական մեթոդը, խմացությունների ընդարձակությունն ու բազմաբանությունը։ Նա գիտության խոշոր կազմակերպիչ էր, Սովետական Միության մեծ քաղաքացի, հայ ժողովրդի մեծատաղանդ և արժանավոր զավակը։ Ակադեմիկոս Ե. Տարլին գրել է. «Ամենանշանավոր գիտնականների թվին, որոնց հայ ժողովուրդը տվել է մեր մեծ Հայրենիքին, անկասկած պատկանում է Հովսեփ Աբգարի Օրբելին»։